Հայաստան-Թուրքիա փորձի փոխանակման նախագծի 5-րդ շրջափուլը սպասում է ձեր հայտերին:

Հրանտ Դինք հիմնադրամը, համագործակցելով Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի հետ, մեկնարկում է **Հայաստան-Թուրքիա փորձի փոխանակման նախագծի նոր շրջափուլ**՝ նպատակ ունենալով խթանելու փորձի փոխանակումը երկու երկրների միջև: 2020-2021 թվականներն ընդգրկող շրջափուլն իրականացվում է «Աջակցություն Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացին. 3-րդ փուլ» ծրագրի շրջանակներում՝ **Եվրոպական միության** աջակցությամբ:

Հայաստան-Թուրքիա փորձի փոխանակման նախագիծը կաջակցի Հայաստանից և Թուրքիայից ընդհանուր թվով **8 մասնագետի՝ մեկ ամիս ժամկետով** ապրելու և գործելու հարևան երկրի որևէ հյուրընկալող կազմակերպությունում այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ **գիտություն, քաղաքացիական հասարակություն, մեդիա, մշակույթ և արվեստ, իրավունք, առողջապահություն, տնտեսություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ** և մի շարք այլ ոլորտներ, որտեղ կա անհրաժեշտություն համագործակցելու: Ծրագրի իրականացման ժամկետներն են՝ **2020 թվականի ապրիլից մինչև 2021 թվականի հուլիսը**: **51 կազմակերպություն Թուրքիայից և 30 կազմակերպություն Հայաստանից** առաջարկում են իրենց ծրագրերը՝ դիմորդների համար:

Ցանկացած դիմորդ, ով ունի անհատական ծրագիր նշվածներից զատ, և կազմակերպությունը, որը ցանկանում է հյուրընկալել մասնագետի, կարող են առանձին կապ հաստատել Հրանտ Դինք հիմնադրամի հետ: Հայտարարությունը բաց կլինի մինչև 8-րդ մասնագետի տեղը լրանալը: Քանի որ գնահատման գործընթացը սկսվում է դիմումները ուղարկելուց անմիջապես հետո, խորհուրդ ենք տալիս դիմել հնարավորինս շուտ: Ծրագրերի իրականացման ժամկետներն են՝ 2020 թվականի ապրիլից մինչև 2021 թվականի հուլիսը:

Host organisations from Turkey (in English).

Host organisations from Armenia (in English).

Խնդրում ենք ուշադիր ընթերցել Հայաստան-Թուրքիա փորձի փոխանակման նախագծի կանոնակարգը՝ նախքան դիմումին անցնելը:

Անհրաժեշտ պայմաններ և պահանջվող փաստաթղթեր.

- Ծրագրին կարող է դիմել ցանկացած անձ, ով ունի Հայաստանի կամ Թուրքիայի **քաղաքացիություն**, կամ այս երկրներում օրինական կացություն
- Ծրագրին դիմելու կարևոր նախապայման է **անգլերենի** վարժ իմացությունը
- **Պահանջվում է** դիմումը լրացնել **անգլերեն լեզվով**
- Պահանջվում է դիմումի համապատասխան բաժնում ներբեռնել թարմացված **ինքնակենսագրական (CV), որը պետք է լինի առավելագույնը երկու էջ**, և **շարժառիթային նամակ, որը պետք է լինի առավելագույնը երեք էջի սահմաններում**

Հետևեք հղմանը՝ դիմումը լրացնելու համար

- Թեկնածուն կարող է նշել **երեք նախընտրելի հյուրընկալող կազմակերպություն** հարևան երկրից: Հարկ է նշել, որ հերթականությունը պետք է նշվի **ըստ նախապատվության** (1-ին տեղում նշված կազմակերպությունը կդիտվի որպես 1-ին նախընտրած կազմակերպություն, և այդպես շարունակ)
- Դիմումը ստանալուց և տեխնիկական գնահատումից հետո **10 օրվա ընթացքում** դիմորդը կստանա էլեկտրոնային նամակ, և հնարավոր է լինի հավելյալ փաստաթղթեր (օրինակ՝ երաշխավորագիր) ներկայացնելու կարիք
- Յուրաքանչյուր դիմումի վերջնական գնահատումը կիրականացվի Հիմնադրամի կողմից՝ **60 օրվա ընթացքում**:

Costs covered:

Ինչ ծախսեր է հոգում ծրագիրը.

- Ընտրված մասնագետը կստանա **1700 եվրո** թոշակ **մեկ ամսվա համար՝ կացության*, տեղական տրանսպորտի և առօրյա ծախսեր** հոգալու համար
- Ծրագիրը հոգում է մասնագետի միջազգային ճանապարհածախսը մեկնելու և հետադարձի համար, ինչպես նաև հյուրընկալող կազմակերպության գտնվելու վայր փոխադրվելու ճանապարհածախսը
- **Վիզայի** և **ճանապարհորդական-առողջական ապահովագրության** ծախսերը
- **Լեզվի դասընթացի** ծախսերը

*Մասնագետից պահանջվում է գտնել կացարան ինքնուրույն, սակայն անհրաժեշտության դեպքում ծրագրային թիմը կարող է աջակցել:

Ծրագրի մասին ավելին իմանալու և ձեր հարցերը մեզ ուղղելու համար, կարող եք կապ հաստատել ծրագրի համակարգողների հետ՝ fellowship@hrantdink.org էլ հասցեով:

Support to the Armenia-Turkey Normalisation Process
European Union Initiative

Հայաստան-Թուրքիա փորձի փոխանակման նախագիծը 2020-2021 թվականներին իրականացվում է «Աջակցություն Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացին. 3-րդ փուլ» ծրագրի շրջանակներում՝ Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: